Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
օգոստոսի 14-ի N 883 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՊԵՏԱԿԱՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառումը	Պատասխանատու մարմինը	Ժամկետները	Անհրաժեշտ իրավական ակտերը
1	2	3	4	5
1.	Պետական-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) շրջանակներում ապագա կառավարման ձևի, ընկերությունների թվի, օպերատորների (կառավարիչների) և ժամկետի վերաբերյալ որոշման ընդունում՝ հաշվի առնելով հետևյալ սկզբունքները՝ 1. ՊՄԳ-ի ձևը՝ երկարատև վարձակալություն: 2. Ժամկետը՝ առնվազն 10 տարի: 3. Վարձակալների թիվը՝ մեկ:	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	2014 թ. սեպտեմբեր	«Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից սպասարկվող տարածքներում պետական-մասնավոր գործընկերության ձևը և ժամկետը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ
2.	Ծախսածածկող սակագներին ուղղված ուսումնասիրությունների վերջնական հաշվետվության քննարկում՝ հաշվի	ՀՀ տարածքային կառավարման նախարարության	2014 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից համապատասխան հաշվետվության հաստատում

1	2	3	4	5
	առնելով հետևյալ սկզբունքները՝ 1. 2016 թ. հունիսի 1-ից վարձակալ ընկերությանը ՀՀ պետական բյուջեից սուբսիդավորում չի հատկացվելու: Վարձակալական ընկերության համար սահմանված սակագինը ներառելու է վարձակալի բոլոր ծախսերը և խելամիտ շահույթը: 2. Վարձակալ ընկերության կողմից վարձակալած ենթակառուցվածքներում կապիտալ ներդրումների նպատակով պետության նախկինում և նոր ստանձնած վարկային պարտավորությունների սպասարկման ֆինանսական պարտքերի մի մասը պետք է փոխհատուցվի սակագնի հաշվին՝ վարձավճարի տեսքով: 3. Սակագնի մեջ պետք է նախատեսվեն պահպանման և վերանորոգման ընդլայնված աշխատանքների համապատասխան ծախսերը, որոնք թույլ կտան ապահովել ջրային համակարգերի բնականոն շահագործումն ու պահպանումը: 4. Սակագները պետք է լինեն մատչելի բնակչության առավել ցածր եկամուտներ ունեցող տնային տնտեսությունների համար:	ջրային տնտեսության պետական կոմիտե		

1	2	3	4	5
3.	Ջրամատակարար ընկերությունների կողմից սպասարկվող գույքի վարձակալությամբ փոխանցման ձևի սահմանում և գնման գործընթացը կազմակերպող միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծում	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	2015 թ. հունվար	«Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից սպասարկվող գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցման ձևի և գործընթացը կազմակերպող միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից սպասարկվող գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցման գործընթացը կազմակերպող միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքային կանոնակարգը և անհատական կազմը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծ
4.	Վարձակալ ընկերության ընտրության հիմնական պայմանների մշակում և հաստատում: Հիմնական պայմանները և կատարողական ցուցանիշները սահմանելուց առնվազն պետք է՝ 1. Նկատի ունենալ սույն ծրագրի 2-րդ կետով սահմանված սկզբունքները: 2. Սահմանվի ըստ քաղաքային բնակավայրերի և գյուղական բնակավայրերի (միջինացված) մատակարարման միջին օրական տևողությունը (ժամ/օր): 3. Սահմանվի ջրի որակի համապատասխանությունը ՀՀ առողջապա-	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե Միջգերատեսչական հանձնաժողով	2015 թ. մայիս	«Վարձակալ ընկերության ընտրության փաստաթղթերի փաթեթին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

1	2	3	4	5
	հության նախարարի 2002 թ. դեկտեմ-բերի 25-ի N 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամա-տակարարման կենտրոնացված հա-մակարգերի ջրի որակին ներկայաց-վող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա 2-1 սանիտա-րական նորմերին և կանոններին: 4. Սահմանվի խոշոր վթարների արձագանքման ժամանակը (ժամ): 5. Սահմանվի գրավոր դիմում-բողոքների արձագանքման ժամանակը (օր): 6. Նկատի ունենալ ապագա վար-ձակալի և պետության միջև ռիսկերի հավասարակշռված (վարձակալական պայմանագրերին հատուկ) բաշխումը: 7. Հաշվի առնվի, որ ապագա վարձակալին ներկայացվող պահանջ-ները պետք է նպաստեն միջազգային համբավ և հայաստանյան փորձ ունեցող ընկերության ընտրությանը: 8. Սահմանվեն Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռաց-ման առանձնահատկությունները՝ վարձակալության պայմանագրում համապատասխան պայմաններ և (կամ) դրույթներ ամրագրելու միջոցով:			
5.	Խմելու ջրի ոլորտի ֆինանսավորման ծրագրի մշակում՝ ներառյալ միջնա-	ՀՀ տարածքային կառավարման	մինչև 2015 թ.	

1	2	3	4	5
	ժամկետ և երկարաժամկետ ներդրու-մային պլանները	նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	դեկտեմբեր	
6.	ՊՄԳ-ի կառավարչի ընտրության գործընթացի կազմակերպում, բանակցությունների վարում, հաղթող կազմակերպության ճանաչում	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե Միջգերատեսչական հանձնաժողով	2016 թ. հունվար	«Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից սպասարկվող գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցման գործընթացի արդյունքները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ
7.	ՊՄԳ-ի պայմանագրի ստորագրում	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե Պայմանագրի կառավարիչ	2016 թ. փետրվար	
8.	Ջրամատակարար ընկերությունների սպասարկման տարածքի գույքը սահ-մանված կարգով նոր վարձակալ ըն-կերությանը փոխանցման գործընթացի կազմակերպում	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե Պայմանագրի	2016 թ. մարտ	«Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող գույքը վարձակալությամբ պայմանագրի կառավարչին փոխանցելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

1	2	3	4	5
		կառավարիչ		
9.	ՊՄԳ-ի պայմանագրի մեկնարկում	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե Պայմանագրի կառավարիչ	2016 թ. հունիսի 1-ը	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ